

Հայտարարություն

Թափուր պաշտոն՝ Կորպորատիվ հաճախորդների ներգրավման մասնագետ
Աշխատանքի նկարագրություն՝ «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ-ն Հայաստանի Հանրապետության խոշորագույն ապահովագրական ընկերություններից մեկն է, որը 21 տարի շարունակ ապահովագրական շուկայում զբաղեցնում է կայուն առաջատար դիրք: Ընկերությունը բարձրակարգ ապահովագրական ծառայություններ է մատուցում անհատների և կազմակերպությունների անձանց համար՝ պաշտպանելով նրանց զանազան ռիսկերից:

«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ապահովագրական ընկերության գործունեությունը միտված է իր հաճախորդների բարձրակարգ ու պրոֆեսիոնալ սպասարկմանը և վերջիններիս հետ երկարատև գործընկերական հարաբերությունների հաստատմանը: Այս նպատակին հասնելու համար Ընկերությունը չափազանց կարևորում է այդ հաճախորդներին ներգրավող և սպասարկող մասնագետների դերը և առաջարկում երիտասարդներին համալրել Կորպորատիվ հաճախորդների ներգրավման մասնագետի թափուր հաստիքը:

Մեր կողմից ընտրված մասնագետին հնարավորություն է ընձեռվելու աշխատել ՀՀ տնտեսության առաջատար կազմակերպությունների, նրանց աշխատակիցների և ղեկավարների հետ: Մասնագետը աշխատանքային առաջին իսկ օրերից ներգրավվում է ուսումնա-աշխատանքային գործընթացի մեջ՝ դառնալով պրոֆեսիոնալ և դինամիկ զարգացող թիմի բաղկացուցիչ մաս: Նոր մասնագետի կրթումն իրականացվում է բաժնի ղեկավարի և թիմի մնացած անդամների կողմից: Կորպորատիվ հաճախորդների ներգրավման մասնագետը պատասխանատու շուկայում առկա պոտենցիալ հաճախորդների ներգրավման և սպասարկման համար՝ համաձայն ստորև նշված աշխատանքային պարտականությունների: Աշխատանքի և մասնագիտական կայացման բարձր փուլերում մասնագետը պետք է ունենա իր ներդրումը հաճախորդների համար ապահովագրության նոր ծրագրերի ստեղծման մեջ:

Պարտականությունները՝

- Ներկայացնել և վաճառել կազմակերպության պրոդուկտները առկա և պոտենցիալ կորպորատիվ հաճախորդներին
- Կատարել շուկայի վերլուծություն և ստեղծել պոտենցիալ հաճախորդների տվյալների բազա
- Պատրաստել շնորհանդեսներ և առաջարկներ
- Նպաստել կորպորատիվ հաճախորդների հետ հարաբերությունների ստեղծմանը, ամրապնդմանը, պահպանմանն ու զարգացմանը
- Կազմակերպել և անցկացնել հանդիպումներ պոտենցիալ հաճախորդների հետ
- Լինել պրոֆեսիոնալ խորհրդատու

Պահանջվող որակը և հմտությունները՝

- Բարձրագույն կրթություն
- Ապահովագրական գործի իմացություն
- Վաճառքի հմտություններ
- Հաղորդակցման և բանակցություններ վարելու գերազանց հմտություններ
- Հայերեն լեզվի կատարյալ իմացություն, ռուսերեն և անգլերենի լավ իմացություն,
- Microsoft Office ծրագրային փաթեթի գերազանց իմացություն
- Շնորհանդեսների պատրաստման և ներկայացման հմտություններ
- Թիմում աշխատելու ունակություն
- Սեփական մեքենայի և վարորդական իրավունքի առկայություն

Դիմելու կարգը՝ Ձեր ռեզյումեն կարող եք ուղարկել hr@ingoarmenia.am հասցեով՝ նշելով թափուր հաստիքի անվանումը:

Դիմելու վերջնաժամկետ՝ 2018թ. հուլիսի 31

Հավելյալ ինֆորմացիայի համար.



Այցելեք մեր կայք. www.ingoarmenia.am



Հետևեք մեր FB էջին. <https://www.facebook.com/ingoinsurance/>